ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 18-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Նարեկ աբեղա Շաքարյանը։ Քարոզի բնաբանն էր «Մարմնոյ կրթութիւն առ սակաւ ինչ օգտակար է, իսկ աստուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է»։*

* * *

Նոյեմբերի 24-ին, շաբաթ, *երեկոյան ժամը 7-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, դասախոսեց վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, Մեծն Ներսես հայրապետի կյանքի և գործունեության մասին։*

Դասախոսության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Նոյեմբերի 25-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Դեկտեմբերի 1-ին, շաբաթ, *«Տօն սրբոց առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթողիմէոսի»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Գարաշյանը։*

Եկեղեցական տոնի առիթով փակ էր Հոգևոր Ճեմարանը։

* * *

Դեկտեմբերի 2-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը։ Քարոզեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալների Հայաստանում կատարած ավետարանական առաքելության մասին, բնաբան ունենալով «Առաքեալք Աստուծոյ, սիւնք հաւատոյ Կաթուղիկէ Եկեղեցւոյ»։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Սուրբ պատարագին ներկա էին նաև մի խումբ հայ ուխտավորներ Ստամբուլից։

* * *

Դեկտեմբերի 9-ին, կիրակի, *«Ցղութիւն Ս. Աստուածածնի յԱննայէ»։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց գերաշնորհ Տ. Աստղիկ եպիսկոպոս Ղազարյանը, վեր հանելով Ս. Աստվածածնի արժանիքները որպես տիպար մոր։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Դեկտեմբերի 11-ին, երեքշաբթի, *երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Նոր Վեհարանում տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստը։*

* * *

Դեկտեմբերի 15-ին, շաբաթ, *երեկոյան ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, տեղի ունեցավ հերթական դասախոսություն։ Դասախոսեց Հոգևոր Ճեմարանի վերակացու հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը՝ Այրերտ Շվայցերի կյանքի և գործունեության մասին։*

* * *

Դեկտեմբերի 16-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը «Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից» բնաբանով։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Դեկտեմբերի 17-ին, երկուշաբթի, Մայր Աթոռ ժամանեց Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ և դիվանապետ հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը։ Երևանի օդանավակայանում Տ. Շահե վարդապետին դիմավորեց հոգեշնորհ Տ. Արսեն աբեղա Թերբերյանը։ Մայր Տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, Շահե վարդապետը ընդունվեց Վեհափառ Հայրապետից։

* * *

Դեկտեմբերի 20-ին, հինգշաբթի, հետմիջօրեի ժամը 3-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում տեղի ունեցավ 1961 թվականի շրջանավարտ երեք ուսանողների ավարտաճառերի հրապարակային բանավոր պաշտպանությունը։

Հոգեշնորհ Տ. Նարեկ աբեղա Շաքարյանի նյութն էր «Գևորգ Չ Կաթողիկոս Զորեքչյանի կյանքն ու գործունեությունը»։

Բարեշնորհ Հակոբ սարկավագ Գյոկչյանի նյութն էր «Խրիմյան Հայրիկը որպես մատենագիր և մանկավարժ»։

Անաստաս սարկավագ Մովսիսյանի նյութն էր «Հայ ազգագրությունը և Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցը»։

Վեհափառ Հայրապետի ներկայության, շրջանավարտները հաջողությամբ պաշտպանեցին իրենց ավարտաճառերը և քննիչ հանձնախմբի գնահատությամբ արժանացան վկայականների։

Ընդհանուր ծափերի մեջ, շրջանավարտները Վեհափառ Հայրապետից աջահամբույրով ստացան իրենց վկայականները։

Վերջում Վեհափառ Հայրապետը խոսեց գեղեցիկ խրատական։

* * *

Դեկտեմբերի 21-ին, ուրբաթ, երեկոյան ժամը 3-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, դասախոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը, Երուսաղեմի Ս. Հարության տաճարի նորոգության մասին։

Դասախոսությունը լավեց մեծ հետաքրքրությամբ։

Վերջում հոգեշնորհ դասախոսը պատասխանեց ներկաներից ոմանց հարցերին։

* * *

Դեկտեմբերի 23-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը «Որում և մեք իսկ վկայեմք» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Սուրբ պատարագին ներկա էր նաև ուխտավորաբար Պոլսից էջմիածին եկած «ժամանակ» թերթի խմբագիր Հակոբ Սվազլյանը։

* * *

Դեկտեմբերի 24-ին, երկուշաբթի, երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ Գելադուշն Հոգևոր խորհրդի նիստը։

* * *

Դեկտեմբերի 25-ին, երեքշաբթի, «Տօն Սրբոյն Ստեփանոսի նախավկային և առաջին մարտիրոսին»։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, բնաբան ունենալով «Ստեփանոս քաղցրիկ տատրակ, Տեառն Յիսուսի քաջ նահատակ» մեղեդու խոսքերը։

Հավարտ սուրբ պատարագի, բարեշնորհ սարկավագները ներկայացան Վեհափառ Հայրապետին՝ ստանալու նրա օրհնությունը։

* * *

Դեկտեմբերի 26-ին, չորեքշաբթի, հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը մեկնեց Մոսկվա։ Երևանի օդանավակայանում հոգեշնորհ հյուրին ճանապարհեցին հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը, բարեշնորհ Զոհրաբ սարկավագ Շամլյանը և դիվանապետ Հայկ Առաքելյանը։

ՀԱՅՈՑ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ